ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Հայ տառերու գիւտին և Հայ տպագրութեան աշխատաւորներու հոգւոյն հանդստեան համար այս առաւօտ Մայր Եկեղեցւոյն մէջ պատարագեց Տ. Գաբրիէլ եպս. Ճէվահիրճեան։

Տ. Կոմիտաս վրդ. կ'վարէր երգեցողութիւնները, որոնց կ'մասնակցի նաև Պ. Շահմուրատեան։ Եկեղեցին ամբողջովին յատկացուած է հրաւիրեալներուն և հազիւ հազ կ'բաւէր։ Եկեղեցւոյն շրջափակը և յարակից փողոցները լեցուած են ծովածաւալ բազմութեամբ։

Գում Գաբու և Կէտիկ Փաշա, փողոցներուն մէջ յաղթական կամարներ շինուած են և ամէն կողմ ոգեւորութիւն կը նշմարուի։ Մայր Եկեղեցւոյն մէջ ժամը 11ին կատարուեցաւ հոգեհանգիստը գրեթէ մայրաքաղաքս գտնուող բոլոր եկեղեցականներուն մասնակցութեամբ։

Ազգային բոլոր պաշտօնական մարմիններուն անդամները, կրթական բոլոր հաստատութեանց վարիչները, մայրաքաղաքիս սեղանաւորական հաստատութեանց վարիչները ներկայ են։ Ֆրանսական դեսպանատունը կ'ներկայացնէ Ա. Թարգման Մ. Լրտու և ռուսական դեսպանատունը Մ. Մանտէլսթամ։ Ռումանական դեսպանատունէն եկած է նաև Թարգման մը։ Ցունաց Պատրիարքարանի գործակատար Իքիատիս էֆ. եկած է ուրիշ պաշտօնեայի մը հետ։